2019 ԹՎԱԿԱՆԻ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Բովանդակություն

1. Ընդհանուր նկարագրություն
2. Ֆինանսական կարիքն ու պակասուրդի ֆինանսավորման աղբյուրները
3. Պակասուրդի ֆինանսավորման պարտքային գործիքակազմը
4. Կառավարության պարտքի մարումն ու սպասարկումը
5. Կառավարության պարտքը 2019 թվականի տարեվերջին

1. Ընդհանուր նկարագրություն

2019 թվականի փոխառությունների տարեկան ծրագիրը մշակվել է կառավարության պարտքի կառավարման 2019-2021թթ. ռազմավարական ծրագրի նպատակադրումներին, ուղենշային ցուցանիշներին և ՀՀ կառավարության պարտքի նվազեցման 2019-2023թթ. ծրագրին համապատասխան, ինչպես նաև հիմք ընդունելով ՀՀ 2019թ. պետական բյուջեի կազմման համար կիրառված մակրոտնտեսական շրջանակն ու ցուցանիշները:

ՀՀ կառավարությունը 2018 թվականից անցում է կատարել նոր հարկաբյուջետային կանոնների վրա հիմնված քաղաքականության՝ նպատակ ունենալով տնտեսության խթանման և երկարաժամկետ տնտեսական աճի ապահովման գործում բարձրացնել հարկաբյուջետային քաղաքականության արդյունավետությունը և միաժամանակ ապահովել պարտքի կայունությունը: Այդ նպատակով մշակվել և ներդրվել են հարկաբյուջետային առավել ճկուն ու համապարփակ, ՀՀ տնտեսության ներկա բնութագրիչներին համահունչ մոտեցումներ և կանոններ, որոնք դրվել են ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի նախագծի մշակման հիմքում:

ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի հիմքում դրված հիմնական ցուցանիշները.

Ցուցանիշներ	*2019թ.*
ՀՆԱ, մլրդ դրամ	6,756.2
Իրական աճ, %	4.9
ՀՆԱ-ի դեֆլյատոր, %	4.0
Պետական բյուջեի եկամուտներ, մլրդ դրամ	1,496.5
Պետական բյուջեի ծախսեր, մլրդ դրամ	1,648.1
Պետական բյուջեի պակասուրդ, մլրդ դրամ	(151.6)
Պետական բյուջեի պակասուրդ, %-ներով ՀՆԱ-ի նկատմամբ	(2.2)
Փոխարկումների համար կիրառված ԱՄՆ դոլար / ՀՀ դրամ փոխարժեք	486.55

2. Ֆինանսական կարիքն ու պակասուրդի ֆինանսավորման աղբյուրները

ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի հիմքում դրված ցուցանիշների համաձայն՝ համախառն ֆինանսական կարիքը կկազմի 424.3 մլրդ դրամ, մասնավորապես.



Նախատեսվում է համախառն ֆինանսական կարիքի 43.3 տոկոսը ապահովել ներքին աղբյուրներից ներգրաված փոխառու միջոցների հաշվին, իսկ 56.7 տոկոսը՝ արտաքին փոխառությունների հաշվին: Այսպես՝ դրա իրագործման նպատակով կիրականացվի 183.2 մլրդ դրամի պետական գանձապետական պարտատոմսերի տեղաբաշխում, որից մուտքը կկազմի 183.7 մլրդ դրամ, և արտաքին աղբյուրներից ներգրաված վարկերի գծով կիրականացվի 240.6 մլրդ դրամի ֆինանսավորում:

ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի պակասուրդը կկազմի 151.6 մլրդ դրամ, որի շուրջ մեկ երրորդը (35.7%) նախատեսվում է ֆինանսավորել ներքին աղբյուրների հաշվին, իսկ մնացած 64.3%-ը՝ արտաքին աղբյուրների հաշվին:

Պակասուրդի ֆինանսավորման աղբյուրները հետևյալն են.

Ցուցանիշներ, մլրդ դրամ	2019թ. (պետբյուջե)	2019թ. (2019 – 2021թթ. ՄԺԾԾ)
Ընդամենը պակասուրդ	**151.6**	**150.6**
այդ թվում՝		
Ներքին աղբյուրներ	**54.1**	**42.1**
որից		
Փոխառու զուտ միջոցներ	**69.1**	**69.2**
գանձապետական պարտատոմսերի տեղաբաշխումից մուտքեր	183.7	180.0
գանձապետական պարտատոմսերի մարում / հետգնում	(113.7)	(110.0)
մուրհակների մարում	(0.9)	(0.8)
Ֆինանսական զուտ ակտիվներ	**(15.1)**	**(27.1)**
վարկերի և փոխատվությունների տրամադրում (զուտ)	(24.4)	(35.4)
ելքերի ֆինանսավորմանն ուղղվող ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի տարեսկզբի ազատ մնացորդի միջոցներ	9.3	8.4
կայունացման դեպոզիտային հաշվից օգտագործում	-	-
Արտաքին աղբյուրներ	**97.5**	**108.6**
որից		
Փոխառու զուտ միջոցներ	**155.4**	**164.9**
վարկերի և փոխատվությունների ստացում	240.6	253.5
ստացված վարկերի և փոխատվությունների մարում	(85.2)	(88.6)
Ֆինանսական զուտ ակտիվներ	**(57.9)**	**(56.3)**
վարկերի և փոխատվությունների տրամադրում (զուտ)	(57.1)	(55.6)
բաժնետոմսերի և կապիտալում այլ մասնակցության ձեռքբերում	(0.8)	(0.8)

3. Պակասուրդի ֆինանսավորման պարտքային գործիքակազմը

2019 թվականին պետական բյուջեի պակասուրդի զուտ ֆինանսավորումը փոխառու միջոցների հաշվին կկազմի 225.4 մլրդ դրամ, ինչը կիրականացվի պետական գանձապետական պարտատոմսերի հաշվին՝ 70.0 մլրդ դրամ, և արտաքին վարկերի հաշվին՝ 155.4 մլրդ դրամ:

Նշենք, որ կառավարության պարտքի կառավարման 2019-2021թթ. ռազմավարական ծրագրով 2019 թվականին նախատեսվում էր պետական բյուջեի պակասուրդը փոխառու միջոցների հաշվին զուտ ֆինանսավորել 234.9 մլրդ դրամի չափով, ընդ որում պետական գանձապետական պարտատոմսերի հաշվին ֆինանսավորման ծավալը մնացել է անփոփոխ, իսկ արտաքին վարկերի հաշվին ֆինանսավորման զուտ ծավալը նվազել է 9.5 մլրդ դրամով:

Ֆինանսավորման ծավալների տարբերությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ գրեթե պահպանելով 2019թ. պետական բյուջեի պակասուրդի ընդհանուր մակարդակը՝ փոփոխություն է կատարվել ֆինանսավորման աղբյուրների միջև: Այսպես, ՀՀ 2019թ.

պետական բյուջեի համաձայն ավելացվել է ներքին աղբյուրներում ֆինանսական զուտ ակտիվների հաշվին ֆինանսավորումը 12.0 մլրդ դրամով (մասնավորապես, վարկերի և փոխատվությունների զուտ տրամադրումը պակասեցվել է 11.0 մլրդ դրամով, ելքերի ֆինանսավորմանն ուղղվող ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի տարեսկզբի ազատ մնացորդի օգտագործումը ավելացվել է 0.9 մլրդ դրամով): Արտաքին աղբյուրներից ֆինանսավորման ծավալը նվազեցվել է 11.1 մլրդ դրամով, մասնավորապես 9.5 մլրդ դրամով նվազեցվել է արտաքին վարկերի հաշվին զուտ ֆինանսավորումը և 1.6 մլրդ դրամով ավելացվել է վարկերի և փոխատվությունների զուտ տրամադրումը:

3.1. Պակասուրդի ֆինանսավորումը պետական գանձապետական պարտատոմսերով

Պետական գանձապետական պարտատոմսերով բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորումն իրականացվելու է կարճաժամկետ (3, 6, 9 և 12 ամիս), միջնաժամկետ (3 և 5 տարի), երկարաժամկետ (10 և 30 տարի) և խնայողական պարտատոմսերի հաշվին:

Յուրաքանչյուր երկու ամիսն առնվազն մեկ անգամ կկազմակերպվեն 52, 39, 26 և 13 շաբաթ մարման ժամկետ ունեցող պետական գանձապետական կարճաժամկետ պարտատոմսերի տեղաբաշխման աճուրդներ: Կարող են իրականացվել նաև պետական գանձապետական կարճաժամկետ պարտատոմսերի լրացուցիչ թողարկումներ, ընդ որում մինչև 3 շաբաթ մարման ժամկետայնությամբ թողարկումներն իրականացվում են կանխիկ հոսքերի կառավարման նպատակով, իսկ 3-12 շաբաթ մարման ժամկետայնությամբ թողարկումները՝ հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականությունների կոորդինացման շրջանակներում:

2019 թվականին կթողարկվեն 3 և 5 տարի մարման ժամկետայնությամբ միջնաժամկետ ու 10 տարի մարման ժամկետայնությամբ երկարաժամկետ նոր պետական գանձապետական պարտատոմսեր:

Պետական գանձապետական պարտատոմսերի տեղաբաշխման աճուրդների օրացույց

Հունվար 2019							
Շաբաթ	ԵՐԿ	ԵՐՔ	ՉՐՔ	ՀՆԳ	ՈՒՐԲ	ՇԲԹ	ԿԻՐ
1		1	2	3	4	5	6
2	7	8	9	10	11	12	13
3	14	15	16	17	18	19	20
4	21	22	23	24	25	26	27
5	28	29	30	31			

Փետրվար 2019							
Շաբաթ	ԵՐԿ	ԵՐՔ	ՉՐՔ	ՀՆԳ	ՈՒՐԲ	ՇԲԹ	ԿԻՐ
5					1	2	3
6	4	5	6	7	8	9	10
7	11	12	13	14	15	16	17
8	18	19	20	21	22	23	24
9	25	26	27	28			

Մարտ 2019							
Շաբաթ	ԵՐԿ	ԵՐՔ	ՉՐՔ	ՀՆԳ	ՈՒՐԲ	ՇԲԹ	ԿԻՐ
9					1	2	3
10	4	5	6	7	8	9	10
11	11	12	13	14	15	16	17
12	18	19	20	21	22	23	24
13	25	26	27	28	29	30	31

Ապրիլ 2019							
Շաբաթ	ԵՐԿ	ԵՐՔ	ՉՐՔ	ՀՆԳ	ՈՒՐԲ	ՇԲԹ	ԿԻՐ
14	1	2	3	4	5	6	7
15	8	9	10	11	12	13	14
16	15	16	17	18	19	20	21
17	22	23	24	25	26	27	28
18	29	30					

Մայիս 2019							
Շաբաթ	ԵՐԿ	ԵՐՔ	ՉՐՔ	ՀՆԳ	ՈՒՐԲ	ՇԲԹ	ԿԻՐ
18			1	2	3	4	5
19	6	7	8	9	10	11	12
20	13	14	15	16	17	18	19
21	20	21	22	23	24	25	26
22	27	28	29	30	31		

Հունիս 2019							
Շաբաթ	ԵՐԿ	ԵՐՔ	ՉՐՔ	ՀՆԳ	ՈՒՐԲ	ՇԲԹ	ԿԻՐ
22						1	2
23	3	4	5	6	7	8	9
24	10	11	12	13	14	15	16
25	17	18	19	20	21	22	23
26	24	25	26	27	28	29	30

Հուլիս 2019							
Շաբաթ	ԵՐԿ	ԵՐՔ	ՉՐՔ	ՀՆԳ	ՈՒՐԲ	ՇԲԹ	ԿԻՐ
27	1	2	3	4	5	6	7
28	8	9	10	11	12	13	14
29	15	16	17	18	19	20	21
30	22	23	24	25	26	27	28
31	29	30	31				

Օգոստոս 2019							
Շաբաթ	ԵՐԿ	ԵՐՔ	ՉՐՔ	ՀՆԳ	ՈՒՐԲ	ՇԲԹ	ԿԻՐ
31				1	2	3	4
32	5	6	7	8	9	10	11
33	12	13	14	15	16	17	18
34	19	20	21	22	23	24	25
35	26	27	28	29	30	31	

Սեպտեմբեր 2019							
Շաբաթ	ԵՐԿ	ԵՐՔ	ՉՐՔ	ՀՆԳ	ՈՒՐԲ	ՇԲԹ	ԿԻՐ
35							1
36	2	3	4	5	6	7	8
37	9	10	11	12	13	14	15
38	16	17	18	19	20	21	22
39	23	24	25	26	27	28	29
40	30						

Հոկտեմբեր 2019							
Շաբաթ	ԵՐԿ	ԵՐՔ	ՉՐՔ	ՀՆԳ	ՈՒՐԲ	ՇԲԹ	ԿԻՐ
40		1	2	3	4	5	6
41	7	8	9	10	11	12	13
42	14	15	16	17	18	19	20
43	21	22	23	24	25	26	27
44	28	29	30	31			

Նոյեմբեր 2019							
Շաբաթ	ԵՐԿ	ԵՐՔ	ՉՐՔ	ՀՆԳ	ՈՒՐԲ	ՇԲԹ	ԿԻՐ
44					1	2	3
45	4	5	6	7	8	9	10
46	11	12	13	14	15	16	17
47	18	19	20	21	22	23	24
48	25	26	27	28	29	30	

Դեկտեմբեր 2019							
Շաբաթ	ԵՐԿ	ԵՐՔ	ՉՐՔ	ՀՆԳ	ՈՒՐԲ	ՇԲԹ	ԿԻՐ
48							1
49	2	3	4	5	6	7	8
50	9	10	11	12	13	14	15
51	16	17	18	19	20	21	22
52	23	24	25	26	27	28	29
1	30	31					

Պետական գանձապետական կարճաժամկետ պարտատոմսեր

Պետական գանձապետական միջնաժամկետ պարտատոմսեր

Պետական գանձապետական երկարաժամկետ պարտատոմսեր

Աճուրդների կողմնորոշիչ ծավալների վերաբերյալ տեղեկատվությունը կհրապարակվի եռամսյակային կտրվածքով:

Յուրաքանչյուր աճուրդին տեղաբաշխման կամ հետգնման ենթակա պարտատոմսերի ծավալների (միջակայքի) և ժամկետների վերաբերյալ տեղեկատվությունը կհրապարակվի աճուրդից առաջ՝ գործակալների հետ խորհրդակցելուց հետո:

2019 թվականի ընթացքում կիրականացվեն նաև պետական գանձապետական պարտատոմսերի հետգնումներ: 2019 թվականի ընթացքում պարտատոմսերի հետգնումների 70-80% կիրականացվեն մարման գրաֆիկի հարթեցման, իսկ 20-30%՝ պարտատոմսերի իրացվելիությունը խթանելու նպատակով: ՀՀ ֆինանսների նախարարությունը յուրաքանչյուր թողարկման պարտատոմսերի տեղաբաշխման ժամանակահատվածում այդ պարտատոմսերի հետգնում չի իրականացնի:

ՀՀ ֆինանսների նախարարության պաշտոնական կայք էջում եռամսյակային կտրվածքով, յուրաքանչյուր եռամսյակից 10 օր առաջ, կիրապարակի ուղենշային համարվող պարտատոմսերի ցանկը:

2019 թվականին կներդրվի պետական գանձապետական պարտատոմսերի փոխանակման աճուրդային համակարգը:

3.2. Պակասուրդի ֆինանսավորումն արտաքին վարկերով

ՀՀ 2019 թվականին պետական բյուջեի պակասուրդը ֆինանսավորելու համար նախատեսվում է արտաքին վարկերի գծով կատարել 238.2 մլրդ դրամի (489.7 մլն ԱՄՆ դոլար) մասհանումներ[1]: Ընդ որում բյուջետային աջակցության վարկերի գծով մասհանումները կկազմեն 74.0 մլրդ դրամ (152.1 մլն ԱՄՆ դոլար) և 164.2 մլրդ դրամ (337.6 մլն ԱՄՆ դոլար)՝ նպատակային վարկային ծրագրերի գծով:

2019 թվականին մասհանումների 39.4%-ը կատարվելու է ռուսական վարկերի գծով: Մասհանումների 30.7%-ը կազմում են սպասվելիք բյուջետային աջակցության վարկերը, որոնք դեռևս ենթակա են բանակցման: Հաջորդ խոշոր մասնաբաժինը (12.3%) բաժին է ընկնում Համաշխարհային Բանկին (ՎԶՄԲ և ԶՄԸ): Ասիական Զարգացման Բանկի տեսակարար կշիռը կկազմի 10.8%: Ըստ վարկատուների մասհանումների կառուցվածքը հետևյալն է.



[1] Արտաքին վարկերի գծով պակասուրդի ֆինանսավորման և արտաքին վարկերից մասհանումների տարբերությունը պայմանավորված է համապատասխան վարկային ծրագրերի շրջանակներում բացված հատուկ հաշիվներում առկա դրամական միջոցների մնացորդներով:

2019 թվականին նպատակային վարկային ծրագրերի գծով մասհանումների կառուցվածքում խոշորագույնը Հայկական ատոմակայանի վերականգնման ծրագիրն է՝ 104.9 մլն ԱՄՆ դոլար: Ընդհանուր առմամբ, ըստ ոլորտների մասհանումների կառուցվածքը կլինի հետևյալը.



2019 թվականին մասհանումների գերակշիռ մասը (54.2%) կկատարվի ԱՄՆ դոլարով տրամադրված վարկերի գծով:





4. Կառավարության պարտքի մարումը և սպասարկումը

2019 թվականին կառավարության պարտքի մարման և սպասարկման համար կպահանջվի 356.9 մլրդ դրամ, որից 198.9 մլրդ դրամը կկազմեն պարտքի գծով մարումները, իսկ 158.0 մլրդ դրամը՝ տոկոսավճարները:

մլրդ դրամ	*Մարում*	*Տոկոսավճար*	***Ընդամենը***
Պետական գանձապետական պարտատոմսեր	113.7[2]	68.8	**182.4**
Արտարժութային պետական պարտատոմսեր	-	32.0	**32.0**
Արտաքին վարկեր	85.2	57.2	**142.4**
Ընդամենը	**198.9**	**158.0**	**356.9**

[2] Ցուցանիշը ներառում է պետական գանձապետական պարտատոմսերի հետգնման համար նախատեսված 24 մլրդ դրամը:



ՀՀ կառավարության արտարժութային պարտքի սպասարկման և մարման համար նախատեսված միջոցները փոխարկվել են ՀՀ դրամի հիմք ընդունելով 2018թ. նոյեմբերի 1-ի դրությամբ արժութային շուկայում ձևավորված միջին փոխարժեքները և այն ենթադրությամբ, որ ԱՄՆ դոլարի 6-ամսյա LIBOR-ի դրույքաչափը 2019 թվականին միջին հաշվով կկազմի 3.1%, իսկ 6-ամսյա EURIBOR-ը՝ չի գերազանցի զրոյական մակարդակը:

Պետական գանձապետական պարտատոմսերի մարման համար նախատեսված 113.7 մլրդ դրամի մեջ 24 մլրդ դրամը կազմում է պարտատոմսերի հետգնումների համար ծրագրավորված գումարը:

Արտաքին վարկերի մարման և սպասարկման գծով նախատեսվում է վճարել 142.4 մլրդ դրամ (292.5 մլն ԱՄՆ դոլար): Նախատեսվող վճարումների կառուցվածքն ըստ վարկատուների հետևյալն է.

մլն ԱՄՆ դոլար	տոկոսավճար	մարում	ընդամենը
Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկ	30.5	2.7	33.2
Զարգացման Միջազգային Ընկերակցություն	24.3	61.1	85.4
Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկ	0.9	4.0	5.0
Եվրոպական Ներդրումային Բանկ	2.3	1.5	3.8
Գյուղատնտեսության Զարգացման Միջազգային Հիմնադրամ	0.6	2.7	3.3
ՕՊԵԿ-ի Միջազգային Զարգացման Հիմնադրամ	2.3	3.4	5.7
Ասիական Զարգացման Բանկ	24.4	23.7	48.1
Եվրամիություն	2.6	-	2.6
Արժույթի Միջազգային Հիմնադրամ	-	29.3	29.3
Եվրասիական Զարգացման Բանկ	6.7	-	6.7
Գերմանիա (ՎՎԲ)	5.0	10.9	15.8
Ռուսաստանի Դաշնություն	12.5	20.8	33.3

մլն ԱՄՆ դոլար	տոկոսավճար	մարում	ընդամենը
Ֆրանսիա	1.8	0.2	2.0
ԱՄՆ	0.3	1.8	2.1
Ճապոնիա	2.0	10.3	12.3
Աբու-Դաբիի Զարգացման Հիմնադրամ	0.2	0.7	0.9
Չինաստանի Արտահանման-Ներմուծման Բանկ	0.5	-	0.5
ԿԲՍ Բանկ (Բելգիա)	0.0	0.6	0.6
Ռայֆայզն Բանկ (Ավստրիա)	0.1	1.0	1.1
Էռստե Բանկ (Ավստրիա)	0.1	0.2	0.4
Ենթակա են բանակցման	0.5	-	0.5
Ընդամենը	**117.5**	**175.0**	**292.5**

5.

Արտարժութային պետական պարտատոմսերի սպասարկման ծախսերը 2019 թվականին կկազմեն 65.8 մլն ԱՄՆ դոլար և ներառում են շրջանառության մեջ գտնվող 2020 ու 2025 թվականներին մարման ենթակա պարտատոմսերի գծով արժեկտրոնային վճարումները:

6. Կառավարության պարտքը 2019 թվականի տարեվերջին

ՀՀ 2019թ. պետական բյուջեի հիմքում դրված կանխատեսումների համաձայն՝ 2019 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ կառավարության պարտքը կկազմի 3,364 մլրդ դրամ կամ ՀՆԱ-ի 49.8 տոկոսը և 2018 թվականի տարեվերջի համեմատությամբ ՀՆԱ-ի նկատմամբ կնվազի 0.9 տոկոսային կետով:

	Առ 31.12.2017թ.	Առ 31.12.2018թ.	Առ 31.12.2019թ.
ՀՀ կառավարության պարտք, մլրդ դրամ	2,988	3,137	3,364
ՀՀ կառավարության պարտք, մլն ԱՄՆ դոլար	6,173	6,448	6,913
ՀՀ կառավարության պարտք, % ՀՆԱ-ի մեջ	53.7	50.7	49.8

2019 թվականի տարեկան փոխառությունների ծրագրի իրականացման արդյունքում ուղենշային ցուցանիշները կգտնվեն ՀՀ կառավարության պարտքի կառավարման 2019-2021 թվականների ռազմավարական ծրագրով ամրագրված շրջանակներում և աննշան կշեղվեն ռազմավարական ծրագրով 2019 թվականի համար կատարված կանխատեսումներից:

	Ուղենիշ	2019թ. (պետբյուջե)	2019թ. (2019-2021թթ. ռազմ.)
Վերաֆինանսավորման ռիսկ			
Մինչև մարում միջին ժամկետը	**8 – 11 տարի**	8.3 տարի	8.0 տարի
Առաջիկա տարվա ընթացքում մարվող պետական գանձապետական պարտատոմսերի (ՊԳՊ) կշիռը ՊԳՊ-երի ծավալի մեջ (տարեվերջին)	**առավելագույնը 20%**	13.7%	14.2%
Տոկոսադրույքի ռիսկ			
Ֆիքսված տոկոսադրույքով պարտքի կշիռն ընդամենը պարտքի մեջ	**առնվազն 80%**	83.9%	82.2%
Փոխարժեքի ռիսկ			
Ներքին պարտքի կշիռն ընդամենը պարտքի մեջ	**առնվազն 20%**	21.8%	20.8%
ՀՀ դրամով ներգրավված պարտքի կշիռն ընդամենը պարտքի մեջ	**առնվազն 20%**	19.6%	18.8%

2019 թվականին կառավարության պարտքի միջին կշռված տոկոսադրույքը կկազմի 5.2%: Կառավարության պարտքի սպասարկման ծախսերը (տոկոսավճարներ) կկազմեն ՀՆԱ-ի 2.3%-ը և պետական բյուջեի ընդամենը ծախսերի 9.6%-ը:

	2017թ.	*2018թ.*	*2019թ.*
Կառավարության պարտքի սպասարկում (տոկոսավճար)			
մլրդ դրամ	122.1	139.3	158.0
%-ներով ՀՆԱ-ի նկատմամբ	2.2	2.2	2.3
%-ներով բյուջեի ծախսերի նկատմամբ	8.1	9.2	9.6
Կառավարության պարտքի միջին կշռված տոկոսադրույք, %	4.9	4.9	5.2

Նախատեսվում է 2018-2019 թվականներին ՀՀ կառավարության պարտքի կառուցվածքում ավելացնել ՀՀ դրամով տեղաբաշխված պետական գանձապետական պարտատոմսերի կշիռը, որն ըստ կանխատեսումների կկազմի համապատասխանաբար 18.7% և 19.6%: Կառավարության պարտքը կունենա հետևյալ կառուցվածքը.

	Առ 31.12.2017թ.	Առ 31.12.2018թ.	Առ 31.12.2019թ.
Կառուցվածքն ըստ ռեզիդենտության, մլրդ դրամ*			
ներքին պարտք	620	664	734
արտաքին պարտք	2,369	2,473	2,630
Կառուցվածքն ըստ գործիքակազմի, մլրդ դրամ			
արտաքին վարկեր և փոխառություններ	1,947	2,054	2,211
պետական գանձապետական պարտատոմսեր	550	588	658
արտարժութային պետական պարտատոմսեր	*484*	*487*	*487*
արտաքին երաշխիքներ	*4*	*4*	*4*
ներքին երաշխիքներ	4	4	4

	Առ 31.12.2017թ.	Առ 31.12.2018թ.	Առ 31.12.2019թ.
Արժութային կառուցվածքը, մլրդ դրամ			
ՀՀ դրամով ներգրավված պարտք	550	588	658
արտարժույթով ներգրավված պարտք	2,439	2,549	2,705
Կառուցվածքն ըստ տոկոսադրույքի տեսակի, մլրդ դրամ			
լողացող տոկոսադրույքով	403	490	540
ֆիքսված տոկոսադրույքով	2,585	2,648	2,823

** 2018 և 2019 թվականների համար պետական գանձապետական և արտարժութային պարտատոմսերի գծով պարտքի մնացորդը բաշխվել է ըստ ռեզիդենտության հիմք ընդունելով 2018թ. հոկտեմբերի 31-ի դրությամբ փաստացի ձևավորված տեսակարար կշիռները:*









2019 թվականի տարեվերջի դրությամբ կառավարության արտաքին վարկերի գծով պարտքի 39.0%-ը բաժին կընկնի Համաշխարհային Բանկին (Զարգացման Միջազգային Ընկերակցություն ու Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկ): Կառավարության արտաքին վարկերի գծով պարտքի կառուցվածքն ըստ վարկատուների կլինի հետևյալը.



2019 թվականի տարեվերջի դրությամբ ձևավորվող կառավարության պարտքի մարման ժամանակացույցը սփռված կլինի մինչև 2054 թվականը և կունենա հետևյալ տեսքը.